Հավելված
Նաիրի համայնքի ղեկավարի
2025 թվականի ——— -ի N —— որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Նաիրի համայնքի <<Արագյուղի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

<<Արագյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենը՝

1. Իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը, այդ թվում՝ կազմակերպում է յուրաքանչյուր սանի կրթությունը նախադպրոցական կրթական ծրագրերի միջոցով, ապահովում է հաստատության սաների զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու, օտար լեզուների և հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
2. Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.
2) «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր).
3) տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ,
5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:
Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 185000 (մեկ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ է:
Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, գ. Արագյուղ, 1-ին փողոց, շենք 23:
Մրցույթը կկայանա 2025 թվականի մարտի 20-ին ժամը 11:00-ին, Նաիրիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճ (ՀՀ Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, ք. Եղվարդ, Երևանյան 1), հեռ. 0224 2-16-91:
Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 2025 թվականի մարտի 5-ը:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝
1) դիմում.
2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
4) ինքնակենսագրություն.
5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի, բնօրինակները և պատճենները.
6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
2. Մրցույթին մասնակցելու համար դիմող քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:
Փաստաթղթերն ընդունվում են Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմում՝ ք. Եղվարդ, Երևանյան 1, Նաիրիի համայնքապետարանի վարչական շենք, հեռ. 022421691, աշխատանքային օրերին՝ ժամը 10:00- ից մինչև 15:00-ը: